



78. ԿՆԻԿ

Մարդ մե գընցնա թագավորի դռնով՝ կը տեսնա թագավորի կնիկ, զուր խաս շորեր հագուկ, նստուկ կէղնի փանջարեն: Մարդ կըսե.

— Ա՛խ, էրնեկ իդա իմ կնիկն էդներ:

Թագավորի կնիկ կը լըսե, զմարդ կը կանչե վերև, իրեք ոանդ ներկուկ հավկիթ կը դնե չառեջ, կըսե.

— Իդա հավկըթներուց ո՛ր մեկի ոանգ օր քըղի դուր չիգա, վերցո՛ւ:

Մարդ զուր հավնած ոանգով հավկիթ կը վերու: Մեկ էլ՝ թագավորի կնիկ մարդու ձեռքեն կառնե՝ զհավկըթներ չըմեն կիտա կըձպել, կը դնե չառջև, կըսե.

— Դե՛, իդա հաղուն, ո՛ր մեկ հավկիթն օր դուր գիկա, գէնի վերցու:

Մարդ կըսե.

— Ո՛ր մեկ վերում, մըկա հավկըթներն չըմեն լե իմ աչքին մեկ տեսակ կէրևան:

— Ո՛րդի, ըշտե ախշըրքի կնկտիք լե իդա հավկըթներու պես ին, ընդոնց ոանգ-ոանգ հալվըներ օր շէղնին՝ չմեն լե մեկ բան ին: Ես թագավորի կնիկ իմ, օր իդա հալավ իմ վրեն շէղնի, ես լե քու կնկա պես կնիկ մե կէղնիմ:

